Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՓՈԽԽՄԲԱԳԻՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ հուլիսի 25-ից Հոգեշնորհ Տ. Դավիթ աբեղա Քարամյանը նշանակվել է «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր:

Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆ

(ավազանի անունը՝ Կարեն)

Ծնվել է 1979 թ. հուլիսի 18-ին Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում:

1986-1996 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. մարտ-մայիս ամիսներին Ռումինիայում մասնակցել է Յաշ քաղաքի Ս. Նիկոլաս համալսարանում ԵՀԽ-ի կողմից կազմակերպված անգլերեն լեզվի ուսումնական դասընթացներին:

2001-2002 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո աշխատել է նախ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, ապա՝ Կաթողիկոսարանում:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռը և Շահամիրյանները» թեմայով:

2002 թ. նոյեմբերի 17-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2003-2007 թթ. սովորել է Աթենքի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում: